էին կազմում նրա ու նրա նախորդների անհատական եւ հաւաքական յիշողութեանը:

Իրօք, դեռ մօտիկ անցեալում ներկայ ուսումնասիրութեանը ձեռնարկելու հնարաւորութիւն չկար: Գրականութիւնը լուռ էր, իսկ Թուրքիոյ խուլ անկիւններում ապրող հայ կոչուած տատիկների ու պապիկների պատմութիւնը մեզ հազիւ էր հասանելի: Վերջին տարիներում իրավիճակը փոխուած է Թուրքիայում: Պատռուած է լռութեան վարագոյրը եւ մանաւանդ՝ դրսում ապրող թուրք մտաւորականները փորձում են հաշուի նստել անցեալի հետ ու յայտնաբերել իրենց հայրենիքի պատմութեան մութ կամ բոլորովին ջնջուած էջերը: Նրանց ընկերային, քաղաքական ու պատմական ուսումնասիրութիւնները, անցեալը պատկերող նրանց գեղարուեստական ստեղծագործութիւնները հակադրւում են երկրի պատմութեան նկատմամբ թուրք պաշտօնական կեցուածքին ու աստիճանաբար դրա մէջ փոփոխութիւն պարտադրում: Ստեղծուած մթնոլորտում, իշխանութիւնները պարտադրուած են որոշ չափով հանդուրժել Թուրքիոյ անցեալ դարի պատմութեան կապուող ու հայկական ջարդերին յղուող յուշերի եւ ինքնակենսագրական գործերի ու վէպերի հրապարակումը: Դրանք ի միջ այլոց խօսում են Ցեղասպանութիւնը վերապրած հայերի մասին, որոնք համարւում էին միանգամայն ձուլուած ու ներծծուած իսլամ հասարակութեան մէջ:

Վերջերս, թուրք ազգային ծայրայեղականների կողմից «Ակօս»ի խմբագիր՝ Հրանտ Դինքի սպանութիւնը յեղաշրջում է առաջացրել թուրք հասարակութեան, բայց մանաւանդ աւելի ազատախոհ տարրերի մտայնութեան մէջ, եւ աշխարհի ուշադրութիւնը հրաւիրուել է հայ-